ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/16

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեգիէլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Փարիզյանի, ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 09.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 01.03.2021թ ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության ««Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ով տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն չի կարող մասնակցել միաժամանակյա բանակցություններին: Միաժամանակյա բանակցությունների նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը տեղափոխվեց 05.03.2021թ ժամը 12:00-ին:» որոշումը,

2. ընդունել նոր բանակցություններ հրավիրելու մասին որոշում՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ին հրավիրելով միաժամանակյա բանակցությունների:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 04.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 05.03.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/3297-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 09.03.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

09.03.2021թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/16 համարի ծածկագիրը:

17.03.2021թ.-ին, 25.03.2021թ.-ին և 01.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2021թ.-ին:

2. «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 09.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5 գնանաշման հարցում, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

1.2 «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) գնանշման հարցմանը մասնակցել է 7-րդ չափաբաժնով դեղապատ ստենտ: Նշված չափաբաժնով Պատվիրատուն ցանկանում է ձեռք բերել 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծով ստենտներ: Ընկերությունը հայտ է ներկայացրել նշված չափերով՝ բացի 2.0 չափից: 1

1.3 Հայտերը բացվել են 25.02.2021թ: Գնահատող հանձնաժողովը 25.02.2021թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով որոշել է, որ ներկայացված փաստաթղթերի հսկակեցման կարիք ունի «Պրոֆտեստ» ՍՊԸ, «Իմպեքս» ՍՊԸ և «Մեգիէլ» ՍՊ ընկերության ներկայացրած հավելված 1.1-ը:

1.4 01.03.2021թ գրությամբ հսկակեցում է ներկայացվել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին այն մասին, որ ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5 ծածկագրով մրցույթի հավելված 1.1 մասնակիցը պետք է ներկայացնի իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ուստի մեր կողմից ներկայացված է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

դեղանյութի արտազատման ամբողջական տևողությունը 180 օր

Ստենտի պատերի հաստությունը 91 մկմ

Մեր կոմից առաջարկը վերաբերելի է 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծով ստենտերի համար:

1.5 Գնահատող հանձնաժողովը 01.03.2021թ ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է փասաթղթերի գնահատման արդյունքում «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի, «Իմպեքս» ՍՊԸ-ի Հավելված 1.1 համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ի, որի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի «Մեգիէլ» ՍՊԸ-ն չի կարող մասնակցել միաժամանակյա բանակցություններին:

Միաժամանակյա բանակցությունների նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը տեղափոխվեց 05.03.2021թ ժամը 12:00-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Համաձայն 3-րդ հոդվածի 2-րդ մասի գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է ափալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի ար հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ

նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների, և Հայաստանի 2անրա պետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման (հետայսու՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Գնահատող հանձնաժողովը 01.03.2021թ թիվ 3 արձանագրությամբ դիտարկելով, որ Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, չի հստակեցրել թե հատկապես ինչը չի համապատասխանում: Ընկերության համար պարզ չէ թե ներկայացվող ապրանքների և հրավերի տեխնիկական բնութագրով ներկայացվող որ չափորոշիչների միջև են արձանագրվել անհամապատասխանություն:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնացին սղլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

5. Առաջին և հաջորդաբար աեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

7-րդ չափաբաժնով ներկայացված դեղապատ ստենտի տեխնիկական բնութագրով ըստ էության Պատվիրատուն ներկայացրել է 7 չափի ապրանքի ձեռքբերման պահանջ: Եթե գնահատող հանձնաժողովը Ընկերության ներկայացրած հայտը գնահատում է հրավերի տեխնիկական բնութագրին անհամապատասխան բացառապես 2.0 չափով հայտ չներկայացնելը, ապա դա գնահատում ենք գնման գործընթացին մասնակցի իրավունքների խոչընդոտում: Գնահատող հանձնաժողովի այս ձևաչափով գնահատման արդյունքում չի ապահովում գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Ի սկզբանե Պատվիրատուն պետք է յուրաքանչյուր չափը ներկայացներ առանձին չափաբաժնով, որպեսզի ապահովեր հնարավոր մասնակիցների մասնակցությունը և բացառվեր չհիմնակորված խոչընդոտների առաջացումը և չսահմանափակվեր այլ մասնակցի մասնակցության հնարավորությունը:

Գործնականում 7-րդ չափաբաժնով ներկայացված 7 չափի սրենտները կարող են ունենալ տարբեր գնային առաջարկ: Այս դեպքում, Պատվիրատուն իր ներկայացրած տեխնիկական բնութագրով, զրկված է լինում ավելի ցածր գնային առաջարկով ապրանքի ձեռքբերման հնարավորությունից, քանի որ մի քանի չափերի ապրանքը մեկ չափաբաժնով ներկայացնելու դեպքում մասնակիցը հնարավորություն չի ունենում հանդես գալ տարբեր գնային առաջարկներով:

Նշված պայմանի իրականացման լայն հնարավորություն կարող էր Պատվիրատուն ապահովել նաև, եթե 7-րդ չափաբաժնով ներկայացված 7 չափերի ապրանքները ներկայացներ առանձին չափաբաժիններով:

ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5 գնանաշման հարցումն իրականացվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 01.03.2021թ ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության ««Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ով տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն չի կարող մասնակցել միաժամանակյա բանակցություններին: Միաժամանակյա բանակցությունների նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը տեղափոխվեց 05.03.2021թ ժամը 12:00- ին:» որոշումը,

2. ընդունել նոր բանակցություններ հրավիրելու մասին որոշում՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ին հրավիրելով միաժամանակյա բանակցությունների:

Ընկերությունը 15.03.2021թ.-ին ներկայացրած լրացմամբ հայտնել է հետևյալը.

«ԳԲՔԱ-ԼՕ-2021/16 ծածկագրով քննվող բողոքի վերաբերյալ Պաավիրատուի ներկայացրած պատասխանի առնչությամբ հայտնում ենք, որ «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5 ծածկագրով ընթացակարգին մասնակցել է համարժեք ապրանքով, ինչպես որ նշված է հրավերով:

Հրավերի 7-րդ չափաբաժնով ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է բացառապես ABBOTT ֆիրմայի արտադրանքին, թեև չի նշել ֆիրմային անվանումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության ներկայացրած հայտը պետք է գնահատեր համարժեքության տեսնակյունից, որը ինչպես պարզ է դառնում մոտեցումն այդպիսին չի եղել:

Ինչ վերաբերում է պատասխանով ներկայացրած 1-ին և 2-րդ կետերի դիտարկմանը, ապա դա կարող է ներկայցվել բացառապես փորձաքննության արդյունքում կայացված եզրակացությամբ արդյունավետությունը և/կամ ռիսկայնությունը հավաստելու նպատակով, այլ ոչ թե ելնելով հարմարավետությունից, նպատակահարմարությունից, ինչպես հայտնում է Պատվիրատուն:

Ուսումնասիրելով մասնակիցների գնային առաջարկները արձանագրում ենք հետևյալը, որ ամենա ցածր գնային առաջարկը ներկայացրել է «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը:

Ընթացակարգի 7-րդ չափաբաժնով պահանջվում է 330 հատ ստենտ: Նշված չափաբաժնով հայտ է ներկայացրել նաև «Պրոֆտեստ» ՍՊ ընկերությունը, որի մեկ միավորի գնային առաջարկը 125.000 ՀՀ դրամ է, իսկ «Մեգիէլ» ՍՊ ընկերության առաջարկը 104.000 ՀՀ դրամ, տարբերությունը 21.000 ՀՀ դրամ, ստացվում է Գյումրի բժշկական կենտրոնը պահանջվող չափերը առանձին չափաբաժիններով չներկայացնելու և ներկայացված ապրանքը համարժեքության տեսանկյունից չգնահատելու արդյունքում պետական միջոցներից վատնում է 6.930.000 ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է, որ բժշկական կենտրոնը պետք է ունենա բոլոր չափերի ստենտեր, որևէ մեկը չի առարկում այդ առումով, սակայն տարիների գործունեության արդյունքում արդեն իսկ կանխատեսելի է լինում չափերի պահանջարկը, ուստի 2.0 չափի ստենտի նվազագույն պահանջարկից ելնելով վատնում է 6.930.000 ՀՀ դրամ պետական միջոցներ, որը որևէ գնահատմամբ չի կարող արդարացվել, սա դեռ մեկ մրցույթի մեկ անուն ապրանքի հաշվարկ է:

Հարկ եմ համարում նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:»:

Ընկերությունը 24.03.2021թ.-ին ի լրումն ներկայացված մեկ այլ լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Գյումրու բժշկական կենտրոնը 16 մարտի 2021թ. թիվ 0199 գրությամբ հայտնել էր, որ ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5 ընթացակարգի 7-րդ չափաբաժնով ներկայացրած պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի ներկայացված ABBOT ապրանքատեսակին համապատասխան չափորոշիչներով, այլ այդ տեխնիկական բնութագրին համապատասխանում է նաև Resolute Onyx և ես մեկ այլ ապրանքանիշ:

Resolute Onyx ստենտը արտադրում է Մեդտրոնիկ ընկերությունը, և «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը, հանդիսանալով նշված ընկերության ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում, հայտարարում և ներկայացնում է, որ Resolute Onyx ստենտի պարամետրերը չի համընկնում 7-րդ չափաբաժնով ներկայացրած տեխնիկական բնութագրին, մասնավորապես այն չափորոշիչը, որը նշել է Պատվիրատուն իր՝ 11.03.2021թ գրությամբ: Resolute Onyx ստենտի դեղանյութն ամբողջությամբ արտազատվում է 180 օրում:

Պատվիրատուն 16.03.2021թ գրությանը կից չի ներկայացրել հավաստի ապացույցներ այն մասին, որ 7-րդ չափաբաժնով ներկայացրած տեխնիկական բնութագրին համապատասխանում են նաև այլ արտադրողներ: Բացի այդ բողոքով ներկայացված փաստարկները վերաբերում են նաև այլ հանգամանքների, որոնց առնչությամբ Պատվիրատուն չի ներկայացրել հակափաստարկ. Պատվիրատուն չներկայացնելով հակափաստարկ ըստ էության հավաստում է, որ 2.0 չափի ստենտի սպառումը նվազագույն է և կանխատեսելի է ստենտի չափերի պահանջարկը, ինչպես նաև Պատվիրատուն չի ներկայացրել հակափաստարկ, որ ստենտի չափերը մեկ չափաբաժնով ներկայացնելով վատնում է դրամական միջոցներ:»:

Ընկերությունը 30.03.2021թ.-ին, ի լրումն ներկայացված բողոքի, հավելել է հետևյալը.

«09.03.2021թ բողոքով ներկայացված փաստական և իրավական հիմքերը, ինչպես նաև բողոքի քննության նիստերում բանավոր ներկայացրած դիրքորոշումը և փաստարկները չեն վերաբերում ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5 ընթացակարգի 7-րդ չափաբաժնով ներկայացրած տեխնիկական բնութագրի վիճարկմանը: Ընթացակարգի տեխնիկական բնութագրի վերաբերյալ բողոք ներկայացնելու ժամկետների մասին իրազեկված ենք:

Բողոքով հայտնել ենք, որ գնահատող հանձնաժողովը 01.03.2021թ թիվ 3 արձանագրությամբ որոշել է, որ Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի չի կարող մասնակցել միաժամանակյա բանակցություններին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

01.03.2021թ թիվ 3 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը չի մերժել Ընկերության հայտը, սակայն անհիմն սահմանափակվել է նրա հետագա մասնակցությունը միաժամանակյա բանակցություններին:

Բողոքով հայտնել ենք, նաև որ 7-րդ չափաբաժնով ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է բացառապես ABBOT ապրանքատեսակին, հետևաբար Ընկերությունը հայտ է ներկայացրել է համարժեք ապրանքով: Այն հանգամանքը, որ Պատվիարտուն չի նշել ապրանքային նշանը կամ մոդելը կամ արտադրողին, դա քողարկող միտում է եղել:

Գյումրու բժշկական կենտրոնը 16 մարտի 2021թ թիվ 0199 գրությամբ հայանել էր, որ ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5 ընթացակարգի 7-րդ չափաբաժնով ներկայացրած պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի ներկայացված ABBOT ապրանքատեսակին համապատասխան չափորոշիչներով, այլ այդ տեխնիկական բնութագրին համապատասխանում է նաև Resolute Onyx և ես մեկ այլ ապրանքանիշ, սակայն չէր ներկայացրել հավաստի ապացույց, իսկ ապացուցման բեռը դրված էր Պատվիրատուի վրա:

Այնուհետև, 25.03.2021թ թիվ 0227 գրությամբ հերքել է իր 16.03.2021թ թիվ 0199 գրությանը և հայտնել է, որ այնուամենայնիվ, Resolute Onyx ստենտը ևս չի համապատասխանում 7-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին, սա հավաստումն է այն բանի, որ 7-րդ չափաբաժինով ներկայացված տեխնիկական բնութագիրը ABBOT ապրանքատեսակին է համընկնում:

25.03.2021թ գրությամբ Պատվիրատուն հայտնում է, որ ներկայացնում է MERIL BIOMIME AURA ստենտի տեխնիկական բնութագիրը՝ վերցված տվյալ արտադրողի պաշտոնական վեբ կայքից, սակայն կից որևէ նյութ չի ներկայացրել: Միևնույն ժամանակ, 25.03.2021թ գրությամբ չենք կարող արձանագրել, որ ներկայացված են MERIL BIOMIME AURA ստենտի տեխնիկական բնութագրի չափորոշիչները, հատկապես այն վիճելի չափորոշիչը, որը Պատվիրատուն դիտարկում էր վտանգավոր հիվանդների կյանքի համար դեղանյութի արտազատման օրերի վերաբերյալ:

25.03.2021թ թիվ 0227 գրությամբ կից ներկայացված տեղեկանքը տրված «ԼԱԷԿԱ» ՀՁ ՍՊ ընկերության կողմից 24.03.2021 թվականին, չի կարող հանդիսանալ հավաստի

տեղեկություն, քանի որ այն ստենտ արտադրող ընկերության պաշտոնական գրություն չէ, բացի այդ, ուսումնասիրելով նրանում նշված չափորոշիչները, արձանագրում ենք, որ չեն համընկնում 7-րդ չափաբաժնով պահանջվող ստենտի չափորոշիչներին և ամբողջական տեղեկություն չի պարունակում:»:

3. <u>«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3341-2021 գրությամբ դիմել է «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 11.03.2021թ.-ին թիվ 0183 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ներկայացնում ենք Ձեր վարույթում քննվող ԳԲՔԱ-ԼՕ-2021/16 բողոքի վերաբերյալ դիրքորոշումը՝

1. Հրավերով պահանջվել է դեղապատ ստենտ, որի դեղանյութը պետք է ամբողջությամբ արտազատվի ոչ ավել 125 օրից, ինչը հնարավորություն է տալիս արյունահոսության բարձր ռիսկի խմբում գտնվող հիվանդներին նշանակել հակաագրեգանտային բուժում կարճ ժամկետով՝ էապես նվազեցնելով արյունահոսության ռիսկը: Սակայն «Մեգիէլ»ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է դեղապատ ստենտ, որի դեղանյութը ամբողջութամբ արտազատվում է 180 օրում:

2. Հրավերով պահանջվել է դեղապատ ստենտ, որի պատերի հաստությունը պետք է լինի ոչ ավել քան 90 մկմ, սակայն «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է դեղապատ ստենտ, որի պատերի հաստությունը 91 մկմ: Դեղապատ ստենտի պատերի հաստության մեր կողմից պահանջվող չափի գերազանցումը ստեղծում է հավելյալ ռիսկեր՝ ստենտի թրոմբոզի, ռեստենոզի /նեղացում/ համար, ինչպես նաև անհասկանալի է ազդեցությունը ստենտի ֆիզիկոմեխանիկական /անցանելիություն, ճաճանչային ուժ և հատկությունների վրա:

3. Ստենտի բոլոր չափերը ներկայացված են մեկ չափաբաժնով, քանի որ

- *նույն հիվանդին 2 և ավել ստենտների տեղադրումը նպատակահարմար է կատարել նույն ստենտով /ինչը նաև նշված է բողոքաբերի ներկայացրած Հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքի օգտագործման ձեռնարկում/:*
- *աշխատանքների կազամակերպումը հնարավոր է միայն, եթե առկա են անխտիր բոլոր չափերը, քանի որ տվյալ պահին կարող է կարիք առաջանա այն չափի ստենտի տեղադրման, որը բացակայում է, ինչը հնարավոր է հանգեցնի անդառնալի հետևանքների:*
- *հնարավոր չէ նախապես կանխորոշել ստենտերի չափերը, քանի որ կախված է հիվանդների անատոմիական առանձնահատկություններից:*
- *ստենտի արժեքը նույնն է անկախ չափերից:*

Հայտը պատրաստելիս առաջնորդվել ենք բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ սահմանված դրույթներով: Եվ վերջապես դա պատվիրատուի իրավունքն է բնութագրել իրեն անհրաժեշտ ապրանքները, ելնելով իր անհատական կարիքներից:

Կից ներկայացվում է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ձևով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում առկա բոլոր փաստաթղթերը:»:

Պատվիրատուն 16.03.2021թ.-ին թիվ 0199 գրությամբ ներկայացրած դիրքորոշման լրացմամբ հավելել է հետևյալը.

«Ի պատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 15.03.2021թ.-ի դիրքորոշմանը, տեղեկացնում ենք, որ բողոքաբերի կողմից ներկայացված այն պնդմանը, որ մեր կողմից հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ- 21/5» մրցույթի արդյունքում հայտարարված 7-րդ չաւիաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրին համապատասխանում է միայն Abbott ընկերության ստենտը՝ չի համապատասխանում իրականությանը և միտված է խեղաթյուրելու մրցույթի իրական պատկերը: Նշված բնութագրին համապատասխանում են առնվազն հետևյալ արտադրողի ստենտերը՝ բողոքաբերի ներկայացրած Medtronic ապրանքանիշի մեկ այլ՝ Resolut onyx ստենտը, Abbott Xience Pro, MERIL BioMime ստենտները:

Մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի պարունակել որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին վերաբերող հղում:

Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական ցուցանիշները տարբերվում եմ մեր կողմից պահանջվող ստենտի տեխնիկական ցուցանիշներից, ինչը ներկայացրել ենք նախորդ դիրքորոշման մեջ: Պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագիրը սահմանվել է գնման հայտով, ելնելով մեր կարիքին համապատասխան: Հայտը գնահատվել է գնահատող հանձաժողովի կողմից հրավերի պահանջներից ելնելով:»:

Պատվիրատուն 25.03.2021թ.-ին թիվ 0227 գրությամբ ներկայացրած դիրքորոշման լրացմամբ հավելել է նաև հետևյալը.

«Նախորդ դիրքորոշումներով, արդեն իսկ փաստել ենք, որ բողոքն անհիմն է և մեր կողմից հայտարարված մրցույթը կազմակերպվել է, բացառապես օրենքի դրույթներին համապատասխան.

Սակայ, հավելենք, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն 24.03.2021թ.-ի գրությամբ նշել է, որ Resolute Onyx ստենտը չի համապատասխանում մեր տեխնիկական բնութագրին, ընդ որում մեկ կետով, այն է ստենտի դեղանյութը արտազատվում է ամբողջությամբ 180 օրում: Նախորդ դիրքորոշման մեջ նշել ենք, որ արտազատման կարճ տևողությունը հնարավորություն է տալիս արյունահոսության բարձր ռիսկի խմբում գտնվող հիվանդներին նշանակել կարճ հակաագրեգանտային բուժում: Նշենք, որ հետազոտությամբ ապացուցված է, որ Resolute Onyx ստենտը թույլ է տալիս արյունահոսության բարձր ռիսկի խմբում գտնվող հիվանդներին նշանակել կարճ հակաագրեգանտային բուժում: Ինչը չենք կարող ասել «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ստենտի համար, որը չէր համապատասխանում երեք կետերով:

Ձեզ ենք ներկայացնում MERIL BIOMIME AURA ստենտի վերցված է Հայաստանում MERIL ֆիրմայի պաշտոնական վեբ կայքից՝ www.margpharma.com - ստենտի կառուցվածքը՝ կոբալտ քրոմ լազերով կտրած, ստենտի պատի հաստությունը՝ 65մկմ: Լայնացումից առաջացած կարճացում՝ 0,29%, դեղանյութը սիրոլիմուս: Կցվում է նաև մեկ այլ ստենտի տեխնիկական բնութագիր:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.02.2021թ.-ին հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 25.02.2021թ.-ին ժամը 11:00-ը ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 7-րդ չափաբաժնի համար ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Դեղապատ ստենտ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Ստենտի նյութը և կառուցվածքը - լազերով կտրված կոբալտ-քրոմի կամ պլատինիում քրոմի համաձուլվացքից կազմված գլան, ստենտի ծածկը - լիմուս ընտանիքի դեղանյութ արտազատող ծածկ, որը պետք է ամբողջությամբ արտազատվի ոչ ավել 125 օրից, ինչը նպաստում է անոթի արագ էնդոթելիզացիային և լավացմանը, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում նվազեցնել հակաագրեգանտային բուժման տևողությունը: Ստենտի պատերի հաստությունը - ոչ ավել քան 90 մկմ: Ստենտի երկայնաձիգ ճկունությունը պետք է լինի գերազանց: Ստենտը պետք է լինի ոչ ֆեռոմագնիսական և ունենա բարձր ճառագայթային ուժ: Լայնացումից առաջացած կարճացում – 0-0,5% : Անկախ լայնացման աստիճանից չպետք է գերազանցի ստենտի երկարության 5%-ը: Անցման պրոֆիլը՝ ոչ ավել 0.043"-ից: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից՝ ստենտը ըստ երկարության, պետք է ունենա 8 և ավել տարբեր չափեր՝ նույն տրամագծի դեպքում: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK և FDA որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար պարտադիր է արտադրող կազմակերպության կողմից մատակարարին տրված ծագման սերտիֆիկատի առկայությունը: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում սահմանված չէ:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

v. «Մեգիէլ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է

«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն թիվ 1.1 հավելվածի:

vi. «Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի համար որպես ապրանքի ֆիրմային անվանումը նշել է՝ *«Դեղապատ ստենտ»,* որպես ապրանքային նշան՝ *«Resolute Integrity»,* որպես մակնիշ՝ *«RSINTXXXXX»,* արտադրողի անվանում՝ *«Medtronic»*, իսկ տեխնիկական բնութագրում սահմանել է հետևյալ չափորոշիչները՝ *«Ստենտի նյութը և կառուցվածքը - լազերով կտրված կոբալտ - քրոմի համաձուլվացքից կազմված գլան, ստենտի ծածկը զոտարալիմուս դեղանյութ արտազատող ծածկ, որը պետք է ամբողջությամբ արտազատվում է 180 օրում, ինչը նպաստում է անոթի արագ էնդոթելիզացիային և լավացմանը, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում նվազեցնել հակաագրեգանտային բուժման տևողությունը: Ստենտի պատերի հաստությունը - 91 մկմ: Ստենտի երկայնաձիգ ճկունությունը պետք է լինի գերազանց: Ստենտը պետք է լինի ոչ ֆեռոմագնիսական և ունենա բարձր ճառագայթային ուժ: Լայնացումից առաջացած կարճացում - 0-0,5%: Անկախ լայնացման աստիճանից չպետք է գերազանցի ստենտի երկարության 5%-ը: Անցման պրոֆիլը 0.043": Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի չափերն են ըստ տրամագծերի՝ 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից՝ ստենտը ըստ երկարության, ունի 8 և ավել տարբեր չափեր՝ նույն տրամագծի դեպքում: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK և FDA որակի վկայականների առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար պարտադիր է արտադրող կազմակերպության կողմից մատակարարին տրված ծագման սերտիֆիկատի առկայությունը: Նոր է, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոններ՝ գործարանային ձեռնարկի ձևով:»:*

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.02.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընացակարգի 7-րդ չափաբաժնի մասով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածը՝ առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը, հստակեցման կարիք ունի:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, փաստաթղթերի շտկման նպատակով, որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել:

viii. 26.02.2021թ.-ին գնատահող հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանը ուղարկված ծանուցման համաձայն՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն տեղեկացվել է, որ հիմք ընդունելով «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8.9 կետը, մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է հստակեցնել Հավելված 1.1-ի 7-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, մասնավորապես՝

- դեղանյութի արտազատող ծածկի ամբողջական արտազատման տևողությունը
- ստենտի պատերի հաստությունը
- կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափեր /բացակայում է 2,0 մմ/:

ix. Ի պատասխան Հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված ծանուցման՝ Ընկերությունը 01.03.2021թ.-ին հայտնել է, որ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով մրցույթի հավելվսծ 1.1 մասնակիցը պետք է ներկայացնի իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ուստի Ընկերության կողմից ներկայացված է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, մասնավորապես՝ դեղանյութի արտազատման ամբողջական տևողությունը՝ 180 օր, ստենտի պատերի հաստությունը՝ 91 մկմ, ինչպես նաև հայտնել են, որ Ընկերության կողմից առաջարկը վերաբերելի է 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծով ստենտերի համար: Միաժամանակ տեղեկացրել են, որ առաջարկվող ապարնքը հանդիսանում է համաշխարհային առաջատար ընկերության Medtronic արտադրության, որի որակական հատկանիշների մասին քաջատեղյակ են բոլոր առաջատար ինտերվենցիոն սրտաբանները, և վերջիններիս առաջարկով էլ ամրագրվել է 2018թ.-ին ՀՀ առողջապահության նախարարության հետ կնքած հուշագրում, որին մասնակցել է նաև Գյումրի բժշկական կենտրոնը:

x. Հանձնաժողովի 01.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ը՝ տեխնիական բնութագիրը, չի համապատասխում հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն չի կարող մասնակցել միաժամանակյա բանակցություններին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.02.2021թ.-ին հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն

սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.02.2021թ.-ին հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով 7-րդ չափաբաժնով գնման առարկա հանդիսացող դեղապատ ստենտ ապրանքի տեխնիկական բնութագրով, բացի այլ չափորոշիչներից, սահմանվել է, որ դեղանյութի արտազատման ամբողջական տևողությունը պետք է լինի ոչ ավել 125 օրից, ստենտի պատերի հաստությունը՝ ոչ ավել քան 90 մկմ, կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափեր՝ ըստ տրամագծերի՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 7-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, Ընթացակարգի 7-րդ չափաբաժնով գնման առարկա հանդիսացող դեղապատ ստենտ ապրանքի մատակարարման համար առաջարկել է «Medtronic» ընկերության «Resolute Integrity» ապրանքային նշանի ապրանքը, որի տեխնիկական բնութագրով, բացի այլ չափորոշիչներից, սահմանվել է հետևյալը. դեղանյութի արտազատման ամբողջական տևողությունը՝ 180 օր, ստենտի պատերի հաստությունը՝ 91 մկմ, անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափեր՝ 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծով ստենտեր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընացակարգի 7-րդ չափաբաժնի մասով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածը՝ առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը, հստակեցման կարիք ունի, ինչով պայմանավորված Հանձնաժողովը,

փաստաթղթերի շտկման նպատակով, որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել:

26.02.2021թ.-ին գնատահող հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանը ուղարկված ծանուցման համաձայն՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ն տեղեկացվել է, որ հիմք ընդունելով «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8.9 կետը, մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է հստակեցնել Հավելված 1.1-ի 7-րդ չափաբաժնի տեխնիական բնութագիրը, մասնավորապես՝

- դեղանյութի արտազատող ծածկի ամբողջական արտազատման տևողությունը
- ստենտի պատերի հաստությունը
- կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափեր /բացակայում է 2,0 մմ/:

Ի պատասխան Հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված ծանուցման՝ Ընկերությունը 01.03.2021թ.-ին հայտնել է, որ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով մրցույթի հավելվսծ 1.1 մասնակիցը պետք է ներկայացնի իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ուստի Ընկերության կողմից ներկայացված է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, մասնավորապես՝ դեղանյութի արտազատման ամբողջական տևողությունը՝ 180 օր, ստենտի պատերի հաստությունը՝ 91 մկմ, ինչպես նաև հայտնել են, որ Ընկերության կողմից առաջարկը վերաբերելի է 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծով ստենտերի համար: Միաժամանակ տեղեկացրել են, որ առաջարկվող ապարնքը հանդիսանում է համաշխարհային առաջատար ընկերության Medtronic արտադրության, որի որակական հատկանիշների մասին քաջատեղյակ են բոլոր առաջատար ինտերվենցիոն սրտաբանները, և վերջիններիս առաջարկով էլ ամրագրվել է 2018թ.-ին ՀՀ առողջապահության նախարարության հետ կնքած հուշագրում, որին մասնակցել է նաև Գյումրի բժշկական կենտրոնը:

Հանձնաժողովի 01.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ը՝ տեխնիական բնութագիրը, չի համապատասխում հրավերով սահմանված պահանջներին, ինչի պայմաններում, «Մեգիէլ» ՍՊԸ-ն չի կարող մասնակցել միաժամանակյա բանակցություններին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ը չի

համապատասխանել Հրավերով սահմանված Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրի գնման առարկայի բնութագրերի, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջների մասով բողոք կարող է ներկայացվել մինչև հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետը, ուստի և Բողոքներ քննող անձի քննությանն ենթակա են միայն այն բողոքները, որոնք ներկայացվում են մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.02.2021թ.-ին հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 25.02.2021թ.-ին ժամը 11:00-ը ներառյալ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերի գնման առարկայի տեխնիկական բնութագիրն ու ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը, թույլ է տալիս եզրակացնել, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, վերջինիս վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը՝ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների խախտման մասով, ներկայացվել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետների խախտմամբ, քանի որ բողոքով ներկայացված Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտման հանգամանքները վերաբերում են ընթացակարգի հրավերով և նույն հրավերի

տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որպիսի պարագայում Ընկերությունը բողոք պետք է ներկայացներ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Բողոքաբերն իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար կարող էր բողոք ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին մինչև «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.02.2021թ.-ին հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը, որպիսի պայմաններում «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/16 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**